

Թեամբ մեծ չափով նպաստեց երաժշտասէր ու երաժշտագէտ հասարակութեան պատրաստելուն: Նրա Զանգերով շատ դպրոցներում երգեցողութիւնն ու ձայնադրութիւնը դարձաւ դասաւանդման պարտադիր առարկայ:

Իբրեւ բաղմաձայն երաժշտութեան սիրահար, իր քառաձայն խմբերով եւ բաղմաթիւ համերգներով Դէմուբեանը ահագին զարկ տւեց հայ երգի ժողովրդականացման: Նա մտնում էր ամենախուլ պաւտոնները, երգը առնելով ժողովրդից՝ վերամշակած ու կատարելագործւած՝ վերադարձնում էր նոյն ժողովրդին: Այս տեսակէտից նա յաջող շարունակողն էր Կարա-Մուրզայի գործի, որի երաժշտական դերը շատ մեծ է արեւելահայոց մէջ:

Վերջապէս, Դէմուբեանը ունի եւ երաժշտական ստեղծագործութիւններ, տեսական ուսումնասիրութիւններ, որոնց մեծ մասը մնացել է անտիպ, եւ հաւաքել ու ձայնագրել է ժողովրդական երգեր: Այս վերջինների մի մասը — 94 երգ — հրատարակեց 1907 թ. Պետերբուրգում — «Քնար», ձայնագրեալ երգարան եւրոպական ձայնանիշներով:

Ստ. Դէմուբեանը իր տաղանդով, ի հարկէ, ոչ Կարա-Մուրզա էր, ոչ էլ Կոմիտաս, բայց իր մոլեռանդ սիրով դէպի հայ երգը, իր անդուլ աշխատանքով, իր բաղմամեայ հետեւողական գործունէութեամբ մեծ ծառայութիւն է մատուցել հայ երաժշտական մշակոյթին:

IV

ՈՆՈՓՐԻՈՍ ԱՆՈՓԵԱՆ

Հիւժախտի ճիրաններում, երկարատեւ եւ տանջալից հիւանդութիւնից յետոյ, Խրիմի Սիմֆերոպոլ քաղաքում, վախճանել է բանաստեղծ Ոնոփրիոս Անոփեանը: Հանգուցեալը ծնւել էր 1873 թ. Նոր-Նախիջևանում: 1892 թ. աւարտել էր Նոր-Նախիջևանի թեմական դպրոցը եւ այնուհետեւ զբաղւում էր հաշւապահութեամբ բանկային հիմնարկութիւնների մէջ:

Անոփեանը պատանի հասակից սկսել էր գրել բանաստեղծութիւններ: Նրա առաջին ոտանաւորը «Զմեռ» անունով տպւել է 1891

թ. Վիէննայի «Հանդէս Ամսօրեայ»ում: Ապա աշխատակցել է «Աղ-
րիւր-Տարազ»ին, «Բանբեր»ին, «Գեղարւեստ»ին, «Նոր Կեանք» շա-
րաթաթերթին, Թիֆլիսի «Յառաջ», «Հորիզոն» եւ այլ դաշնակցա-
կան թերթերին: Մեծ մասամբ գրում էր քնարական եւ հայրենասո-
րական բանաստեղծութիւններ: Առանձին ուշադրութիւն էր դար-
ձնում գրած քի արտաքին ձեւին՝ չափին, յանգին, լեզւի եւ ոճի գե-
ղեցկութեան:

Բացի ինքնուրոյն գրած քերից, Անուիեանը ունի բազմաթիւ
թարգմանութիւններ՝ ուռա, լեհ, Ֆրանսացի բանաստեղծներից:
Նրա գրչի տակից գուրս են եկել յաջող թարգմանութիւններ Պուշ-
կինից, Լերմոնտովից, Բրիւսովից, Բլոկից, Միցկէւիչից, Կրասին-
սկուց, Վերլէնից, եւ այլն: Նրա ինքնուրոյն եւ թարգմանական եր-
կերի մեծ մասը մնացել է անտիպ, բայց զանազան պարբերականնե-
րում եւ թերթերում հրատարակւածներն էլ, եթէ հաւաքւին, մի
սուար հատոր կը կազմեն: Երեւանի Պետհրատը լաւ գործ արած կը
լինէր, եթէ հրատարակէր Անուիեանի երկերի ժողովածուն:

Վերջին տարիները Անուիեանը ապրում էր խիստ նեղ պայման-
ներում: Զրկանքների, նիւթական ու բարոյական տանջանքների մէջ
էլ մեռաւ:

